ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/241

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարանի
Մասնակից՝ «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/18» ծածկագրով բաց մրցույթ, Ակտիվ քաղաքացի հարթակում հաղթող ճանաչված նախագծով նախատեսված Արևային տաղավարի, Երգող նստարանի և Վիրտուալ ճանապարհորդության տաղավարի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15179-2020 գրությամբ «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 29.09.2020թ.-ի թիվ 01/61-19196h գրության հիման վրա, 06.10.2020թ.-ին «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 06.10.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 07.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/241 համարի ծածկագիրը:

15.10.2020թ.-ին և 06.11.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.11.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 29.09.2020թ.-ի թիվ 01/61-19196h գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել Վարուժան Կոչկոյան Գագիկի Ա/Ձ-ն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 17.09.2020 թվականին գնահատող հանձնաժողովին հասցեագրված դիմումի համաձայն՝ Վարուժան Կոչկոյան Գագիկի Ա/Ձ-ն հրաժարվել է 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալով պայմանավորված և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, առաջարկում եմ Վարուժան Կոչկոյան Գագիկի Ա/Ձ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/18» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.10.2020թ.-ին գրությամբ դիմել է «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15179-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը 21.10.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«15.10.2020թ. ժամը 15:45-ին, որպես «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ի հիմնադիր հրավիրված եմ եղել նիստի՝ Երևանի Քաղաքապետարանի կողմից հայտարարված Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Ակտիվ քաղաքացի հարթակում հաղթող ճանաչված նախագծով նախատեսված Արևային փաղավարի ձեռքբերում մրցույթին մասնակցությունից հրաժարվելու պատճառով: Հայցում եմ իմ ներողամտությունը, քանի որ ,ցավոք, չկարողացա նիստին ժամանակին ներկայանալ, որովհետև դիմավորում էի Արցախից ժամանած հայրիկիս, ով կամավորական հիմունքներով մեկնել էր ծառայելու հայրենիքին:

Նախ և առաջ ցանկանում եմ նշել, թե ինչու էի մասնակցում մրցույթին: Մասնագիտությամբ ճարտարապետ եմ, դեռևս ուսանողական տարիներից և հետագայում՝ մասնագիտության մեջ փորձ ձեռք բերելով հետզհետե աճում էր իմ ցանկությունը հայրենի քաղաքիս՝ Երևանի ճարտարապետական զարգացման գործում իմ դերն ու լուման ունենալ: Տեսնելով քաղաքապետարանի կողմից կազմակերպված հրաշալի նախաձեռնությունը, այն է՝ «Ակտիվ Քաղաքացի» հարթակը, անհապաղ մասնակցության դիմեցի, նպատակս իրագործելու համար: Կայքի հարթակում առաջարկեցի Երևանում կանգնեցնել արևային էներգիայով սնուցվող փաղավարի ճարտարապետական նախագիծ-միտք, որի նպատակը

կլիներ մարդկանց ցուցադրել վերականգնվող աղբյուրից ստացված էներգիայի արդիականությունը և կիրառելիությունը և կհանդիսանար ժամանակակից ճարտարապետական օբյեկտ՝ Երևանյան միջավայրում:

Պարզաբանեմ մրցույթը հաղթելուց հետո մցույթից հրաժարվելու պատճառը. Քանի որ ես եմ «Ակտիվ քաղաքացի» կայքում ներկայացված արևային տաղավարի ճարտարապետական հորինվածքի հեղինակը, և քանի որ մրցույթին մասնակցելուց չէի հետապնդում որևէ նյութական շահ՝ ներկայացրել էի իրականացման ամենա ցածր գինը և արդյունքում մրցույթում հաղթել: Սակայն ավաղ, պետական գնումների կայքում գնառաջարկը ներկայացնելիս վրիպում եմ թույլ տվել, 2 տաղավարի գնի փոխարեն գրել եմ մեկի գինը: Քանի որ, ինչպես նշեցի իմ կողմից ներկայացված գինը ձևավորել էի բացառապես ինքնարժեքով, ապա ցավոք և որևէ ռեսուրս չունէի ներկայացվածս գնով փորձել մեկի փոխարեն երկու տաղավար իրականացնել:

Հույսով եմ կարողացա պատշաճ կերպով ներկայացնել մրցույթից հրաժարվելուս պատճառը և հույսով եմ ինձ կընդառաջեք և չեք ներառի իմ ներկայացրած ԱՁ-ն սև ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/241 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Ակտիվ քաղաքացի հարթակում հաղթող ճանաչված նախագծով նախատեսված Արևային տաղավարի, Երգող նստարանի և Վիրտուալ ճանապարհորդության տաղավարի ձեռքբերման նպատակով 22.07.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/18» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ն:

ii. «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.09.2020թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ին՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

iv. 11.09.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 10-րդ օրացույցային օրը ներառյալ:

v. «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ն 17.09.2020թ.-ին դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ մասնակցելով «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացրել է սխալ գնային տվյալ, ուստի այդ պատճառով հրաժարվում է ընթացակարգով նախատեսված հետագա պարտավորություններից:

vi. Հանձնաժողովի 23.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ն 17.09.2020թ.-ին Հանձնաժողովին հասցեագրված դիմումի համաձայն 1-ին չափաբաժնի մասով հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15179-2020 գրությամբ «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Ակտիվ քաղաքացի հարթակում հաղթող ճանաչված նախագծով նախատեսված Արևային տաղավարի, Երգող նստարանի և Վիրտուալ ճանապարհորդության տաղավարի ձեռքբերման նպատակով 22.07.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/18» ծածկագրով բաց մրցույթին հայտ ներկայացրած «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ն Հանձնաժողովի 11.09.2020թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից: 11.09.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 10-րդ օրացույցային օրը

ներառյալ: Սակայն «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ն 17.09.2020թ.-ին դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ մասնակցելով «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացրել է սխալ գնային տվյալ, ուստի այդ պատճառով հրաժարվում է ընթացակարգով նախատեսված հետագա պարտավորություններից: Հանձնաժողովի 23.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ն 17.09.2020թ.-ին Հանձնաժողովին հասցեագրված դիմումի համաձայն 1-ին չափաբաժնի մասով հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ն 17.09.2020թ.-ին Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հրաժարվելով ընթացակարգով նախատեսված հետագա պարտավորություններից, ըստ էության հրաժարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնման ընթացակարգի հետագա մասնակցությունից, քանի որ գործում առկա նյութերի համաձայն դեռևս ավարտված չէր անգործության ժամկետը, ինչպես նաև Մասնակցին չէր ներկայացվել պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15179-2020 գրությամբ «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/241 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Վարուժան Կոչկոյան Գագիկի» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ